«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ Ռուզաննա Նավասարդյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Կանիաշիրի Հիմնական Դպրոց

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տրամադրի դպրոցը: **Աշխատանքի կարևորությունն է՝** Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Աշխատանքի նպատակը է՝Ձևավորել սովորողների գիտական աշխարհայացի և ուսումը շարունակելու համար անհրաժեշտ հիմքեր: Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից: Նպաստել նրանց արժեհամակարգի ձևավորմանը: Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը, հասկանալի դարձնել՝ պատմական այդ գործիչների միջոցով իրականացված ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները: Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:

Աշխատանքի խնդիրները են՝բացահայտել հայ դեռահասի արժեքային կողմնորոշիչների ձևավորման առանձնահատկությունները, նրա սոցիալական վարքի որոշ դրսևորումների շարժառիթները հանրակրթական դպրոցներում, որոշել դեռահասի արժեհամակարգի, մտահորիզոնի, աշխարհայացքի ձևավորման և փոփոխման վրա հայկական էլեկտրոնային մեդիայի ազդեցության չափն ու բնույթը, ձևակերպել հայկական էլեկտրոնային մեդիաքաղաքականության խնդիրները աշակերտների արժեհամակարգում հանրակրթական դպրոցներում, մատնանշել որոշ թերացումներ, որ կան հայ իրականության գերակա արժեքների ձևավորման և պահպանման ճանապարհին:

Գլուխ 1. Հանրակրթական դպրոցներում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը

1.1. «Արժեհամակարգ» հասկացության ձևավորումն ու կիրառումը

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը՝ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է՝ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ, երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենաադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու

կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: /[2]/Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին: Չ՞է, որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը ։

/[3]/Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին։ Հենց այս պատճառով է՝ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»

Տես՝ 1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65: 2.Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: 3.Ուսուցչի ձեռնարկ: էջ 5

1.2. Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները հանրակրթական դպրոցներում

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն:Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների,ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ

կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Արժեքային համակարգը նախատեսվում է՝ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք: Ունենա ազգային ինքնագիտակցություն կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցներում, Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում: Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը հանրակրթական դպրոցներում դասի ընթացքում: Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . .

/[4]/Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները,որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

1. Սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2. Նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,

3. ՈՒսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից ,

4. Դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից ,

5. Սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6. Դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,

7. Պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից, միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,

8. Սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. Ստեղծագործական ,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից ,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա: Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը

և,ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների

ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիրակչական գործընթացի օրինաչափություններին: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ՝ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները: Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու,նրա սոցիալական , հոգևոր մ բարոյական փորձի վերաբերյալ գիտելիաներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն:Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝

կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության -հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը,մեր համոզմամբ,խառը /համակցված/ դասն է ,որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն : Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում , ընդհանրացում , ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում , որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս : Այս դասի ընթացքում գործադրվոըմ են բացատրական-ցուցադրական, էրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-ցուցադրական, էվրիստիկ զրույցներ, դատողական, վերլուծական և այլ եղանակներ: Եթե դասին գրեթե հավասարապես են ներկայացվում

երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ, ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը։ Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ։ 1. Սովորողներին զինել հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը։ Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից։Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին։ 2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները։ 3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին։ 4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը։ Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ։ 5

Տես՝4. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում։ 5.Ուսուցչի ձեռնարկ էջ 6։ 6.Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում էջ 39։ 7. Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում։ էջ 112

Գլուխ 2 Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործնական կիրառումը

2.1. Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության

նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այս օրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: /[8]/Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում:

Տես՝ 8. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.:

2.2. Հանրակրթական դպրոցներում կիրառվող ուսուցման մեթոդները

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի միջև իրականացվող գործընթաց է, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում, կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը: Մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն,

քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Հանրակրթական դպրոցներում աշակերտների գիտելիքներն ամրապնդելու համար դասավանդող ուսուցիչն կիրառում է բազմաթիվ, շատ արդիական մեթոդներ՝ դասի որակն բարելավվելու նպատակով կիրառելով հետևյալ մեթոդներից՝ վեննիդիագրամ, պրիզմա, T-աձև աղյուսակ, խճանկար, գծապատկերներ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Այս պահանջներին բավարարում է **ինտերակտիվ մեթոդների** կիրառումը: «Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող: Ինտերակտիվդասընթացներգործակցությունէոչմիայնդասավանդողիևսովորողի, այլևհենցիրենց՝սովորողներիմիջև, ուսումնականյութիևսովորողներիմիջև:

2.3. Հանրակրթական համակարգերում ուսուցման ցուցանիշները

Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա: Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է. վերջին տարիներին այն միջինում կազմել է մոտ 90%: Հիմնական կրթության համակարգում ընդգրկվածությունը 2009 թ. կազմել է 92.1%, որը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով, և այս իմաստով էական անհավասարություններ չկան: Միևնույն ժամանակ, ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է՝ 2009 թ. 83.9% (տե՛ս գծապատկեր 1): Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիմնական կրթությունից հետո սովորողների մոտ 10%-ն ուսումը շարունակում է նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Այսինքն, ավագ դպրոցում ընդգրկվածության ցածր մակարդակը դեռևս չի նշանակում, որ սովորողների զգալի մասը հիմնական դպրոցից հետո դուրս է մնում կրթությունից: Այլ խնդիր է, թե սոցիալական որ խմբերի երեխաներն են շարունակում կրթությունն ավագ դպրոցում, այսինքն՝ հավակնում կրթության ավելի բարձր մակարդակի:

Գծապատկեր 1. Համախառն ընդգրկվածությունը հանրակրթության համակարգում, %



Միաժամանակ, անհրաժեշտ է բարելավել դպրոցների շենքային պայմաններն ու հարստացնել նյութատեխնիկական բազան՝ մոտեցնելով այն միջազգային չափանիշներին: Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական դպրոցների զգալի մասը կառուցվել է մինչև 1970-ականները և չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, չունի բնականոն ուսումնակենցաղային պայմաններ: Հանրակրթական դպրոցներից 956-ը (66,4 %) ենթակա են հիմնանորոգման, 234-ը վերականգնման-ուժեղացման աշխատանքների կարիք ունեն, 167 (11,6 %) դպրոց գտնվում է վթարային վիճակում, իսկ 67-ը (4,6 %)՝ անավարտ են կամ նոր մասնաշենքերի կառուցման կարիք ունեն: 209 դպրոց չունի սպորտային, իսկ 254-ը՝ հանդիսությունների դահլիճներ: Որոշ դպրոցներում բացակայում են կամ չեն գործում ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերը: Մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից է բուհերում և ՄՄՈՒՀ-ներում ժամանակակից, միջազգային պահանջներին համապատասխան կահավորված գրադարանների բացակայությունը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին: Մանկավարժական մասնագիտություններով բուհերի և ՄՄՈՒՀ-ների մասնագիտական ծրագրերն ու ուսումնական պլանները չեն վերանայվել և համապատասխանեցվել հանրակրթության ոլորտում ընթացող բովանդակային բարեփոխումներին համապատասխան, մասնավորապես ուսուցման նոր մեթոդների, ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից:

Գծապատկեր 4. Պետական բուհերում ուսանողների ընդգրկվածությունը՝ ըստ մասնագիտական խմբերի, %.



Եզրակացություն-Առաջարկություններ

Հետազոտելով հետևյալ թեման եկա այն եզրակացության, որԱյս անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան: Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի:Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

1. Դասի ընթացքում կիրառել ժամանակակից մեթոդներ՝ դասի որակը գերազանցելու և սովորողների ուսման կարողությունները բարելավվելու նպատակով:

2. Ուսուցչի մասնագիտությունն ավելի գրավիչ դարձնել ապագա և գործող ուսուցիչների համար՝ բարելավելով նրանց կարգավիճակը, վարձատրության քաղաքականու թյուններն ու կարիերայի առաջընթացի հնարավորություն ները:

3. Բարձրացնել ուսուցիչների արդյունավետությունը և մոտիվացիան՝ նրանց զինել ով համապատասխան մանկավարժական նյութերով, որոնք համապատասխա նեցված են ուսումնառուի կարիքներին, և բավարար ժամանակ նախատեսել ուսուցման համար ու կազմակերպել օժանդակ անձնակազմի առկայությունը (օրինակ ուսուցչի օգնական, հատուկ մանկավարժ կամ ռեսուրս ուսուցիչ), որը կօգնի ուսուցիչներին բավարարել կոնկրետ ուսումնառության կարիքներ:

4. Առաջնահերթություն տալ կրթական ռեսուրսներում կատարվող ներդրումներին, որպեսզի բոլոր աշակերտներին հնարավոր լինի գործուն աջակցություն ցուցաբերել այն դեպքերում, երբ նրանք ետ են մնում, և բարելավել կրթական տեխնոլոգիաների օգտագործման պրակտիկաները՝ որպես ուսուցչին փոխլրացնող, այլ ոչ թե փոխարինող միջոց:

5. Շարունակական աջակցության տրամադրում և մոտիվացում՝ մանկավարժական բուհերում մասնագիտական զարգացման բարձրորակ հնարավ որությունների և դպրոցական լուրջ առաջնորդության միջոցով, որը թույլ կտա ուսուցիչներին շարունակաբար կատարելագործվել:

Օգտագործված Գրականության Ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

2. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:

3 . Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում :

4. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

5. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986

6. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.:

7. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան, 2014 թ.:

8. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:

9. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, Ամարաս, 2006թ., 706 էջ:

Բովանդակություն

1. Ներածություն……1

2. Գլուխ 1. Հանրակրթական դպրոցներում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը

1.1. «Արժեհամակարգ» հասկացության ձևավորումն ու կիրառումը……..…….……..….2

1.2. Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները հանրակրթական դպրոցներում……...……5

Գլուխ 2 Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործնական կիրառումը

2.1. Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը……11

2.2. Հանրակրթական դպրոցներում կիրառվող ուսուցման մեթոդները……..……..13

2.3. Հանրակրթական համակարգերում ուսուցման ցուցանիշները……15

3. Եզրակացություն-Առաջարկություններ……..……..17

4. Օգտագործված գրականության ցանկ……19